ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՋԱՎԵՆ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանի անունն անխզելիորեն կապված է XVIII դ. առաջին երեսնամյակի հայ ազատագրական շարժման հետ։ Իսրայել Օրու, Մինաս Տիգրանյանի, Եսայի կաթողիկոսի, Երից Մանկանց Ներսես կաթողիկոսի, Ավան Յուզբաշու, Դավիթ Բեկի, Մխիթար Սպարապետի, Իվան Կարապետի և այլ գործիչների ջանքերով է, որ հայ իրականության մեջ արմատավորվել է ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշումը, ստեղծվել է անդրկովկասյան ժողովուրդների հակաթուրքական պայքարի միասնական ճակատ, սկզբնավորվել և հաստատուն զարգացում են ապրել հայ-ռուսական քաղաքական, դիվանագիտական հարաբերությունները։ Դեռևս XVIII դ. սկզբից զինվորագրվելով հայ ժողովրդի՝ ռուսական ռազմաքաղաքական օգնությամբ ազատագրման գաղափարին, Եսայի կաթողիկոսն իր ամբողջ կյանքում զարմանալի նախանձախնդրությամբ ու եռանդով պայքարում էր այդ խնդրի իրականացման համար։

Իր ապրած բարդ ժամանակաշրջանի նման հակասական է եղել նաև ազատագրական շարժման այս երախտավորի նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքը և՛ իր կենդանության օրոք՝ փոփոխված պայմաններին համապատասխան նրա գործելակերպում առաջացած տակտիկական փոփոխությունների, և՛ հետագա սերունդների կողմից՝ հայ ազատագրական շարժման մեջ նրա խաղացած դերի ամբողջական պատկերը գնահատելիս։

Եսայի Հասան Ջալալյանի՝ 1726—1728 թթ. քաղաքական-դիվանագիտական գործունեությունը ճիշտ գնահատելու համար ելակետ պետք է ընդունել ոչ թե փաստաթղթերում պահպանված առանձին պիտակավորումները[1], որ գրանցում սպրդել են ազատագրական շարժման առանձին մասնակիցների՝ դեպքերից անմիջապես ստացած հապճեպ տպավորություններից, այլ ժամանակի ռազմաքաղաքական բարդ իրադրությունը, այդ իրադրությունը բացահայտող բոլոր փաստաթղթերի համադրումը, ականավոր գործիչների աներկբա գնահատականները։

Եսայի Հասան Ջալալյանի գործունեությանը ճիշտ գնահատական է տրված Ֆ. Պողոսյանի հոդվածում, 1977 թ.[2]։ Տակավին 1974 թ. մենք ևս հանգամանորեն քննարկել ենք հայ ազատագրական շարժման այդ երախ-

---

[1] Պ. Արտյունյան, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII в., 1954, էջ 232—233, «Армяно-русские отношения в XVIII веке», т. II, ч. I, Ереван, 1964. էջ LXXXVIII, «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 158, 159.

[2] Ֆրունզե Պողոսյան, Էջմիածնի կաթողիկոսությունը և հայ-ռուսական հարաբերությունները XVIII դ. առաջին քառորդում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1977, № 4, էջ 24—36)։

տավորի գործունեությունը և տվել այդ գործունեության տակտիկական փոփոխությունների պատճառները[3]։

1726 թ. գարնանը Անդրկովկասի նվաճումը թուրքերի կողմից իրական փաստ էր։ Վրաստանը, Հայաստանի և Ադրբեջանի մեծ մասը օկուպացված էին թուրքերի, իսկ Շիրվանի դաշտավայրի հյուսիսային շրջանները (Շամախի քաղաքով)՝ թուրքական կողմնորոշում ունեցող լեռնական ֆեոդալների կողմից։ Անդրկովկասի միակ չնվաճված մասը մնում էին Ղարաբաղի և Զանգեզուրի հայկական շրջանները, որտեղ համառորեն պայքար էր մղվում թուրքերի դեմ։

Ուժերի բացարձակ անհավասարության պայմաններում հայկական շրջանների ազատագրական շարժման տևականության և համառության երաշխիքներից մեկն էլ Կասպից ծովի ափերը ռազմակալած ռուսական զորքերի աջակցությունը ստանալու հայերի ակնկալություններն էին։ Հայ ազատագրական շարժման ղեկավարները ռուսական արքունիք հղած իրենց բազմաթիվ խնդրագրերում շեշտում էին, որ եթե հայերի ազատագրական պայքարի այդ վճռական պահին օգնություն չստանան, ապա սղնախների օրհասական պայքարը երկար տևել չի կարող։ Սղնախներում ստեղծված այս վիճակի բարելավման համար որոշակի նշանակություն է ունենում հայերին հասած այն լուրը, թե ռուսական կառավարությունը պատրաստ է նրանց զինական օգնություն ցույց տալ մերձկասպյան ռուսական զորքերի հրամանատար գեներալ-ֆելդմարշալ Վ. Դոլգորուկովի և Վախթանգ VI-ի գլխավորությամբ[4]։ Սակայն այս անգամ ևս հայերի սպասելիքները չիրականացան. ռուսների փոխարեն Շամախի մտան թուրքական զորքերը, իսկ հունիսին սղնախների մատույցներում՝ Բարգայում, կենտրոնացավ Սարը Մուստաֆա փաշայի գլխավորած թուրքական և լեռնական ֆեոդալների միացյալ բանակը։ Թուրքական ռազմական վտանգը ավելի ծանրացավ սղնախների վրա և ավելի քան երբևիցէ անհրաժեշտ դարձավ ռուսական օգնությունը։ Եսայի կաթողիկոսը 1726 թ. մայիսի վերջին կանցլեր Գ. Գոլովկինին գրած նամակում նշում էր, որ եթե ռուսական օգնությունը մեկ ամիս էլ ուշանա, ապա ամեն մի սղնախ «ձեռաց կերթա»։ «Ըխտիար ունեք, չասեք թե չգրեցիք», ավելացնում է նա[5]։

Վտանգը չի ուշանում։ Թուրքական բանակի զորամասերը 1726 թ. հունիսի 10-ին նոր արշավանք են ձեռնարկում դեպի Ղարաբաղ, այս անգամ Խաչենի մելիքության ուղղությամբ։ Թուրքերն ավերում, թալանում ու հրկիզում են այդ մելիքության Ղազանչի, Ջանկաթաղ, Ղապարթու և այլ գյուղերը, բնակչության մի մասին կոտորում, իսկ մյուս մասին՝ գերեվարում են։

Թուրքերի հետագա խորացումը կանխվում է սղնախների ուժերի հակահարվածով[6]։

---

3 Ջ. Արզումանյան, Պյոտր I-ի Պարսկական արշավանքը և ազատագրական շարժման վերելքն Անդրկովկասում (թեկնածուական դիսերտացիա, անտիպ), էջ 23, 150—155, տե՛ս նաև նույն դիսերտացիայի ավտոռեֆերատը՝ «Персидский поход Петра I и подъем освободительного движения в Закавказье», Ереван, 1975, էջ 29։

4 Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, վավ. № 214, «Армяно-русские отношения в XVIII веке», т. II, ч. II, վավ. № 330։

5 Ա. Դ. Արրահամյան, Մի էջ Անդրկովկասի և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1954, վավ. № 72։

6 Նույն տեղում, վավ. № 74։

Ինչ խոսք, այդպիսի անհաջողությունը և հայերի համառությունը թուրքական մեծաքանակ բանակի ղեկավարներն անուշադրության մատնել չէին կարող։ Բանն այն է, որ հայերի դեմ ուղարկվել էին միայն պատժիչ ջոկատներ, որոնց պիտի հետևեր թուրքական 40-հազարանոց զորքի հիմնական ուժերի հարձակումը, նպատակ ունենալով վերացնել հայկական սղնախները և ղրանով իսկ ոչնչացնել թուրքերին Մերձկասպյան շրջանները տանող հիմնական խոչընդոտը։

Թերևս թուրքական հրամանատարության՝ նման ձեռնարկման համար խթանիչ նշանակություն պետք է ունենար նաև ռուսների կողմից հայերին ցուցաբերվելիք օգնության վերոհիշյալ լուրը և քաղաքական առաքելությամբ Մերձկասպյան ռուսական օկուպացիոն շրջանում Վախթանգ VI-ի գտնվելը։ Ինչ խոսք, թուրքերը պիտի ձգտեին կանխել ռուսներին։

Ստեղծված իրադրության համապատասխան էլ պետք է կողմնորոշվեին հայ քաղաքական շրջանները, մանավանդ որ ռուսական կառավարության՝ զինական օգնություն ցուցաբերելու մասին տարիներ շարունակ տրված խոստումների չիրականացումը նրանց համոզում էր, որ թուրքական սպասվող նոր հարձակման դեպքում հայերը պետք է ապավինեին միայն ու միայն սեփական միջոցներին։ Հենց այդպիսի մտադրության առկայության մասին է խոսում Եսայի կաթողիկոսի վերոհիշյալ նամակում արված «թե որ իսկի բնավ մեզ օգնության հասնելու չեք, էլվի մեզ մեկ սարեհ ջուղապ գրեք, մեր փիքրն քաշեմք, որ բանն բանեն անցել է» ակնարկը։

Սղնախների ղեկավարներն այդ խնդրի լուծմանը մոտեցան հաշվի առնելով Ղտրաբաղի ռազմաստրատեգիական առանձնահատկությունները։

Բանն այն է, որ սղնախների ռազմաստրատեգիական հնարավորությունները տարբեր էին։ Դժվարամատչելի կամ անառիկ վայրերում տեղակայված սղնախները ապավինելով տեղանքին, սակավաթիվ ուժերով ի վիճակի էին շարունակելու զինված պայքարը՝ ակնկալելով ռուսական կառավարության օգնությունը։ Մյուս՝ դաշտավայրային և նախալեռնային շրջանների սղնախները (Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքությունների զգալի մասը) ի վիճակի չէին ինքնապաշտպանական սեփական միջոցներով ապահովել իրենց անվտանգությունը։ Նրանք հեռու էին նաև ավելի հզոր սղնախներից և, հետևաբար, չէին կտրող նրանցից լուրջ օգնություն ստանալ[7] և թուրքերի ու նրանց դաշնակից կովկասյան լեռնականների հիմնական ուժերին դիմակայելով՝ կարող էին աղետի ենթարկվել։

Սղնախների ղեկավարները սպառնացող աղետի կանխման հարցը լուծեցին, ելնելով ստեղծված իրավիճակից ու իրենց հնարավորություններից։ Ինքնապաշտպանության համար բավական ուժեր ու հնարավորություններ չունեցող շրջանները դադարեցրին զինված պայքարը և թուրքերի հետ կնքեցին յուրահատուկ մի զինադադար, ըստ որի հայերը պարտավորվում էին «իրենց գոյության ու խաղաղության համար թուրքերին վճարել ոչ մեծ քա-

---

7 Հետագայում՝ 1729 թ. հոկտեմբերին, Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիայում Շոշ սղնախի ղեկավարներից Թարխան յուզբաշին իր հայտարարության մեջ նշել է, որ թուրքերի հարձակման ժամանակ նրանց հպատակվել են «սղնախներից հեռու գտնվող հայկական այն գյուղերը, որոնց իրենց զորքով (սղնախները—Ջ. Ա.) պաշտպանել ոչ մի կերպ չեն կարող» (Г. А. Эзов, նշվ. աշխ., վավ. № 299)։

նակով դրամ՝ որպես հարկ»[8], իսկ լեռնային շրջանների սղնախները շարունակեցին զինված պայքարը։

Եսայի Հասան Ջալալյանն անմասն չմնաց այս իրարամերժ իրադարձություններին մասնակցելուց և հայերի համար ճակատագրական ու խճճված այս իրադրության մեջ քիչ ջանքեր չգործադրեց։ Նա հաշվի առնելով Բարդայում ռուս-թուրքական սահմանագծման նպատակով գեներալ-լեյտենանտ Ա. Ռումյանցևի և Սարը Մուստաֆա փաշայի հանդիպումը, որով վավերացվում էր Ղարաբաղը Թուրքիայի տիրապետության տակ անցնելու փաստը, և համոզվելով փոփոխված քաղաքական իրադրության կայունության մեջ, Շոշ սղնախում գտնվող Իվան Կարապետին հրահանգավորեց պայքարի դրոշը չխոնարհած սղնախների ղեկավարներին հորդորել, որպեսզի նրանք զգույշ լինեն, իզուր տեղը չգրգռեն, ոտքի չհանեն շրջակա գյուղերի բնակիչներին[9], քանի որ ռազմունակ ուժերը սղնախներում կենտրոնացված լինելու պատճառով նրանք զրկված էին ինքնապաշտպանությունից։

Եսայի կաթողիկոսի այս դիրքորոշումը ստեղծված անբարենպաստ պայմանների ու հակադիր ուժերի ծայրահեղ անհավասարության օրինաչափ արդյունք էր։ Ռուս-թուրքական սահմանաբաժան հանձնաժողովների հանդիպումը նրան համոզեց, որ ռուսական կառավարության կողմից հայկական շրջանները թուրքական տիրապետության տակ անցնելու փաստի պաշտոնական ճանաչումն ունի տևական բնույթ և, հետևաբար, անիմաստ է ընթացիկ պայքարում հույսը դնել ռուսական զինական աջակցության վրա։ Եսայի կաթողիկոսի համար պարզ է դառնում թերևս նաև այն, որ ռուսական զինական օգնության բացակայության պայմաններում ռուսական արքունիքի կողմից այդ նպատակով արվող հավաստիացումներն ունեն հայերի դիմադրությունը երկարաձգելու միջոցով թուրքական բանակի առաջխաղացումը դեպի ռուսահպատակ տարածքները կանխելու նպատակ, որը հայերի համար ռազմաքաղաքական սպառնալից հետևանքներ ուներ։ Եսայի Հասան Ջալալյանը, որն անշուշտ շահագրգռված էր զինված պայքարը շարունակելու հարցում, ստեղծված իրա-

8 Նույն տեղում։

9 «Պիտի հրամանդ մեր տղոցդ խրատես փարաղաթ կենան, գեղարանց հետ բան չունին, թէ որ չէ՝ սոքա էլ կռիվ կանեն»,— գրել է նա (Ա. Գ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, նշվ. աշխ., վավ. № 75)։

Եսայու այս հրահանգը մեր գրականության մեջ տարընթերցման է ենթարկվել։ «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի ակադեմիական հրատարակության IV հատորում (Երևան, 1972, էջ 158—159) այն հնչում է այսպես. «Հարկ է, որ համոզես մեր տղաներին հանգիստ մնալ և չտարվել գեղչուկների տրամադրությամբ, բայց եթե այնուամենայնիվ կռվի բռնվեն (թուրքերի հետ) թող հենց իրենք էլ պատասխանատու լինեն հետևանքների համար»։ Ղարաբաղի բարբառում «փարաղաթ» կամ «փրղաթ» բառն օգտագործվում է «կամաց», նամ «զգույշ» («փրղաթ կաց», «փրղաթ դիր»), այլ ոչ թե «հանգիստ» իմաստով։ Կարծում ենք, որ ճիշտ կլինի վերոհիշյալ հրահանգի այս ընթերցումը. «Հարկ է որ մեր տղաներին հորդորես զգույշ լինել, գյուղերի հետ գործ չունենալ [գյուղերը ոտքի չհանել], հակառակ դեպքում սրանք (թուրքերը) ևս կվերսկսեն հարձակումը»։ Նախորդ ընթերցմամբ ստացվում է այնպես, որ Եսային մտահոգված է միայն սղնախների ղեկավարների վիճակով և նրանց խորհուրդ է տալիս գյուղացիների ազդեցության տակ չընկնել և պայքարը շարունակել, մի խոսքով ղենքը վայր դնել։ Սա իսկապես կապիտուլյանտական կուրս կլիներ։ Իրականում Եսայու հրահանգը հանգում է նրան, որ անպաշտպան գյուղացիներին պետք չէ ոտքի հանել, այլապես թուրքերը կվերսկսեն հարձակումը, որը ողբերգական վախճան կարող է ունենալ։ Պայքարը պետք էր շարունակել ժողովրդի ռազմունակ մասով, որը կենտրոնացված էր սղնախներում, զինված էր և այդ անառիկ ամրոցներում կարող էր հաջողությամբ կռվել և պաշտպանվել։

վիճակում վարվեց հետևյալ կերպ. առերես արտահայտելով «թուրքահպատակություն», նա մի կողմից երաշխավորեց անպաշտպան ժողովրդի ֆիզիկական ապահովությունը, մյուս կողմից՝ պայքարի դրոշը չխոնարհած սղնախների համար պայքարը շարունակելու հնարավորություններ ստեղծեց։ Նրա հենց այսպիսի դիրքորոշման մասին ուղղակի ձևով ասվում է գեներալ-ֆելդմարշալ Վ. Դոլգորուկովի 1729 թ. փետրվարի 5-ի՝ Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիա՝ Ղարաբաղի հայկական սղնախներից ռուսական Մերձկասպյան օկուպացիոն շրջան անցած Ավան և Թարխան յուզբաշիների գլխավորած պատվիրակության մասին հղած մի հաղորդագրության մեջ[10]։ Նրանում Վ. Դոլգորուկովը մասնավորապես շեշտում է իր նկատառումները սղնախներում հակաթուրքական պայքարի համառության և տևականության մասին ուղղակի նշելով «որ նրանք (հայերը —Զ. Ա.) դիմացել են միայն իրենց կաթողիկոս Եսայու խելքի ու պատվիրանների շնորհիվ, որն անցած ամռանը (1728 թ. ամռանը—Զ. Ա.) վախճանվեց»[11]։

Հայտնի է, որ Վ. Դոլգորուկովը Ա. Ռումյանցևի հետ միասին հայերին զինական աջակցություն ցուցաբերելու կողմնակիցներից էր[12], և աշխատում էր օգնել նրանց՝ ամեն կերպ հովանավորելով ու քաջալերելով զինված պայքարը շարունակելու կողմնակիցներին[13]։ Հետևաբար, նա այդպիսի բարձր գնահատական չէր տա Եսայի կաթողիկոսին՝ ընդհուպ մինչև իր մահը՝ 1728 թ. ամառը սղնախների ազատագրական անզիջում պայքարը ղեկավարելու ասպարեզում, եթե 1726 թ. թուրքական «փաշայի մոտ գտնվող» կաթողիկոսը իսկապես իր կապերը խզած լիներ պայքարող սղնախների ղեկավարների հետ և նպաստած չլիներ այդ պայքարին։ Եվ կարծես թե վերոհիշյալ մտքի հաստատմանն ու պարզաբանմանն է նվիրված այդ հաղորդագրության շարունակությունը. «Եվ չնայած նա (Եսային—Զ. Ա.) փաշայի մոտ էր գտնվում, այնուամենայնիվ իր գաղտնի հրահանգներով նրանց (հայերին—Զ. Ա.) չի թողել»[14]։

Առանձնակի նշանակություն ունեն նաև 1728 թ. ռուսական օկուպացիոն շրջաններն անցած Ավան և Թարխան յուզբաշիների գլխավորած բազմամարդ պատվիրակության հաղորդած տեղեկությունները։ Ե՛վ Վ. Դոլգորուկովը, և՛ Ա. Ռումյանցևը (սույն հաղորդագրությունը կազմված է վերջինիս տեղեկությունների հիման վրա) բազմիցս նշում են, որ այս պատվիրակության ղեկավարներն «իրենց հանգիստ չեն տալիս» անընդհատ դիմումներով, պահանջելով ռուսական զորքերը մտցնել Ղարաբաղ և Շամախի։

Ռուսական զորքերը Ղարաբաղ և Շամախի մտցնելու մասին իրենց բազմաթիվ դիմումների ու պատճառաբանությունների ընթացքում տրամաբանական է, որ հայ յուզբաշիները պետք է նաև շեշտեին Եսայի կաթողիկոսի քաղաքական դավանափոխությունը և թուրքերին անձնատուր լինելը, եթե դա իրոք եղել էր, քանի որ նրա քաղաքական դերը շատ մեծ էր, և հայ պատվիրակներն իրենց վիճակի վատանալը պետք է բացատրեին նաև դրանով։ Սա-

10 «Армяно-русские отношения в XVIII веке», т. III, Ереван, 1978, էջ 140։

11 Նույն տեղում։

12 Г. А. Эзов, նշվ. աշխ., վավ. № 289։

13 Վ. Մ. Մարտիրոսյան, Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում, Երևան, 1971, էջ 202—203։

14 «Армяно-русские отношения в XVIII веке», т. III, էջ 140։

կայն մենք տեսնում ենք դրա հակառակ պատկերը՝ այն, որ ռուսական գեներալ-ֆելդմարշալն արքունիք հաղորդելով այդ բոլոր ասուլիսների բովանդակությունը, շեշտում է, որ Եսայի կաթողիկոսը չնայած գտնվում է «փաշայի մոտ», բայց և այնպես ապստամբներին ղեկավարել է իր հրահանգներով։

Եթե Եսային, իրոք, թուրքերին անձնատուր եղած լիներ, ապա դա Վ. Դոլգորուկովը առնվազն պետք է դիտեր որպես դավաճանություն ռուսական շահերին և դժվար թե նրա մասին դրական արտահայտվեր։

Մինչև իր կյանքի վերջը հայ ազատագրական շարժմանը Եսայի կաթողիկոսի նվիրվածության մասին է խոսում և այն, որ 1727 թ. կեսերին ռուսաց արքունիքում պաշտոնական ընդունելության ժամանակ Բաղի յուզբաշին և Քյոխվա չելերին հայտարարել են, որ իրենք գործուղված են սղնախների քաղաքական շրջանների կողմից՝ շեշտելով երկու կաթողիկոսներին էլ։

Վ. Դոլգորուկովի վերոհիշյալ զեկուցագրում հաղորդվում է նաև ոչ պակաս հետաքրքիր մի այլ փաստ։ Նա գրում է, որ Եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսի վախճանվելուց հետո սղնախների ղեկավարներ Ավան և Թարխան յուզբաշիները գնացել են Իրանի «ինքնակոչ շահի մոտ»[15]։ Անշուշտ պարսկական սակավազոր Թահմազ II շահի մոտ հայկական սղնախների ղեկավարների կատարած առաքելությունը հետապնդում էր քաղաքական նպատակ՝ հակաթուրքական պայքարում միասնական ճակատ կազմելու համար դաշնակցություն փնտրել։ Այս առաքելությունն անհեռանկար քայլ էր, քանի որ շահը հայերին որևէ օգնություն ցույց տալ չէր կարող և, ընդհակառակը, ինքն էր զգում դրա կարիքը։ Առաքելությունն ավարտվում է անհաջողությամբ։

Եսայի կաթողիկոսի գործունեության գնահատման խնդրում առկա որոշ անհստակության համար թերևս հիմք է ծառայում 1726 թ. նոյեմբերի 15-ին Ավան և Օհան յուզբաշիների անունից Մերձկասպյան շրջանների ռուսական հրամանատարությանը հղված նամակը։ Նրա մեջ անհայտ նամակագիրը մասնավորապես գրել է հետևյալը.

«Եսայի հոգևոր տերն, քանի որ Ղարապաղումս մելիք կա, ևս քաթխուդա կա, ժողովեց, ղոշուն կապեցին... և մեզ հետ կռիվ ին անում, թե մենք օսմանցուց ղուլուղկան ենք, ձեզ ուզիլ չենք»[16]։ Մեր կարծիքով, եթե անգամ Շոշ սղնախը թուրքական բանակի կողմից պաշարվելու ժամանակ Եսայի կաթողիկոսն իր շքախմբով գտնվել է նրա կազմում, ապա ղրանով նա հետապնդել է երկու ուժերի բախումը մեղմացնելու նպատակ[17]։ Նամակագիրը, թերևս թուրքերի՝ 1726 թ. աշնանը ունեցած անհաջողությունների անմիջական

---

15 Խոսքը շահ Թահմազ II-ի (1729—1732) մասին է։ Նա «ինքնակոչ» է դիտվում այն պատճառով, որ 1722 թ. սկսած, երբ Սպահանը գրավեց Աֆղան Միր-մահմուդը, Իրանում ընդհատվեց Սեֆյան դինաստիայի իշխանությունը և հաստատվեց աֆղանական տիրապետություն (1722—1729)։ Հոր՝ շահ Սուլթան Հուսեյնի, գահընկեցությունից հետո նրա որդի Թահմազ II-ը իրեն հայտարարել էր շահ և սակավաթիվ ուժերով կռվում էր թուրքերի և աֆղանների դեմ։

16 Ա. Գ. Ա ր ա ր հ ա մ յ ա ն, նշվ. աշխ., վավ. № 76։ Հարկ է նշել, որ այս նամակը գրված է երրորդ անձավորության կողմից. նրա տակ չկան հիշյալ յուզբաշիների ստորագրությունները։ Նույն ճակատամարտի դրվագների մասին այդ պաշտպանության մասնակից Իվան Կարապետի մանրամասն զեկուցագրում ոչ մի ակնարկ չկա Եսայու հետ կապված այդ միջադեպի մասին։ Այս հանգամանքը կասկած է հարուցում վերոհիշյալ նամակում պարունակվող որոշ տեղեկությունների հավաստիության նկատմամբ։

17 Տե՛ս «Армяно-русские отношения в XVIII веке», т. II ч. 1, էջ XXXVII:

ազդեցության տակ, ձգտելով ռուսական ռազմական իշխանությունների աչքում ավելի բարձրացնել սղնախների հաղթանակի նշանակությունը, պաշարող զորքերի շարքում դասել է նաև ողջ Ղարաբաղի ուժերը։

Այս վավերագրի քննության կապակցությամբ բերենք մեկ ուրիշ փաստարկ։ Նույն ճակատամարտի մասնակիցներից Թարխան յուզբաշին 1729 թ. հոկտեմբերի 21-ին Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիայում արած իր հայտարարության մեջ մասնավորապես ասել է. «Զնայած թուրքերը... մեծ հարձակումներ են իրենց (հայերի—Զ. Ա.) վրա գործել, բայց առայժմ ամբողջ իրենց ուժերով դիմակայել են դրանց և ոչ մի հարկ կամ տուրք նրանց (թուրքերին—Զ. Ա.) առ այսօր չեն տվել. միայն սղնախներից հեռու գտնվող հայկական որոշ գյուղեր, որոնց իրենց զորքով (սղնախները—Զ. Ա.) պաշտպանել ոչ մի կերպ չեն կարող, իրենց պաշտպանության և հանգստի համար թուրքերին վճարում են որոշ քանակով դրամ՝ որպես տուրք»[18]։

Այստեղ սղնախները ներկայացնում են որպես Ղարաբաղի, ընդհանրապես բոլոր հայերի պաշտպան, իսկ նախորդ նամակում, ընդհակառակն, ամբողջ Ղարաբաղը հակադրվում է Շոշ սղնախին։ Ինչպես տեսնում ենք, հակասությունն ակնհայտ է։

Վերոհիշյալը մեզ հիմք է տալիս կասկածի տակ առնելու այս անստորագիր նամակում տեղ գտած կարևոր հարցերին վերաբերող որոշ փաստական տվյալներ, որոնք, ի դեպ, ինչպես նշվեց վերևում, չեն հաստատվում այլ աղբյուրներով։ Ռազմաքաղաքական ու դիվանագիտական հարցերում սահմանափակ մարդու կողմից (ինչպես դա երևում է նամակից) Եսայի կաթողիկոսի քաղաքական կողմնորոշման ու գործելակերպի փոփոխման մասին խումապային տրամաբանությամբ հաղորդված տեղեկությունները, կարծում ենք, հիմք չպիտի հանդիսանան ազատագրական պայքարի ղեկավարներից մեկի՝ Եսայի կաթողիկոսի, գործունեության գնահատման համար։ Հյսվաստի և ճշմարտապատում են այդ ժամանակաշրջանի նշանավոր դիվանագետ ու ռազմական գործիչ գեներալ-լեյտենանտ Ա. Ռումյանցևի ու գեներալ-ֆելդմարշալ Վ. Դոլգորուկովի հաղորդած տեղեկությունները, որոնք ամբողջացնում են հայ ազատագրական շարժման պատմության մեջ Եսայի Հասան Ջալալյանի խաղացած դերը։ Նորերս գիտական շրջանառության մեջ դրված վավերագրերի քննությունը կրկին ու կրկին ցույց է տալիս, որ Եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսը հայ ազատագրական պայքարի քաղաքական կողմնորոշման հարցում ոչ միայն չի ցուցաբերել տատանումներ, այլ նաև՝ չեզոքություն։ Նա մինչև իր կյանքի վերջը հավատարիմ է մնացել հայ ժողովրդի ազատագրական պայքարին ու նրա ռուսական կողմնորոշմանը, եղել է այդ պայքարի ղեկավարներից մեկը։

Խնդրո առարկա հարցի աղերսով վերջում տեղին ենք համարում անդրադառնալ XVIII դ. 20-ական թվականների հայ ազատագրական շարժման մեջ Ջրաբերդի և Գյուլիստանի հայ մելիքների բռնած դիրքորոշմանը։ Պ. Հարությունյանը, օրինակ, նկատի առնելով այն, որ այդ մելիքները 1724 թ. Գանձասարի ժողովում ռուսական արքունիքին հպատակություն չհայտնեցին, փորձել է ժխտել նրանց ռուսական կողմնորոշումը, նրանց մեղադրել թուր-

---

18 Г. А. Эзов, նշվ. աշխ., վավ. № 299։

քերին հպատակություն հայտնելու մտադրության մեջ[19]։ Այնինչ, թե՛ Երից Մանկանց վանքի կաթողիկոս Ներսեսը և թե՛ նրա երեք եղբայրները՝ Սարգիսը, Արրահամը և Եսային, «իրենց ազատագրական նկրտումներով նույնպես ապավինել են ռուսական զինվորական օգնությանը»[20]։ Գանձասարի ժողովում ռուսական արքունիքին հպատակություն չհայտնելը բացատրվում էր ոչ միայն պարսիկների և թուրքերի վրիժառությունից խուսափելու շրջահայեցությամբ, այլև՝ (որը, թերևս, գլխավորն էր) ռուսական զինական օգնության փաստական բացակայությամբ, հանդամանք, որը ծանր վիճակ էր սաեզծել շարժման համար. ստիպելով նրա ղեկավարներին դիմելու դիվանագիտական այլևայլ միջոցների։ Եթե Ներսեսն ու իր եղբայրները «թուրքերի կողմնակից լինեին կամ նրանց ենթարկվելու մտադրություն ունենային, ապա ի՞նչն էր նրանց խանդարում իրենց մտադրությունը իրականացնելու կամ ինչո՞ւ պետք է դաշնակցեին մյուս սղնախների հետ և համատեղ պայքարեին թուրքերի դեմ»[21],— իրավացիորեն գրում է Վ. Մարտիրոսյանը։

Այսպիսով. XVIII դ. 20-ական թվականների հայ ազատագրական շարժման այս կամ այն ղեկավարի գործունեությունը գնահատելիս անթույլատրելի է անտեսել այդ գործունեությունն իր ամբողջականության մեջ և նշանակետ ընդունել իրադրությունների հարկադրանքի տակ ձեռնարկված այս կամ այն դիվանագիտական քայլը, որոնց նպատակն էլ, ի դեպ, շարժման ընդհանուր շահերին ծառայելն էր։

К ВОПРОСУ ОЦЕНКИ ПОЛИТИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ КАТОЛИКОСА ЕСАИ АСАНА ДЖАЛАЛЯНА

ЗАВЕН АРЗУМАНЯН

Резюме

Политическая деятельность последних лет жизни (1726—1728) крупного деятеля армянского освободительного движения 20-ых годов XVIII в. католикоса Есаи Асана Джалаляна у некоторых исследователей получила не совсем верную оценку. Анализ нововыявленных материалов показывает, что до конца своих дней он остался верен делу освободительного движения армянского народа и его русской ориентации, являлся одним из видных руководителей этой борьбы.

---

19 П. Арутюнян. Նշվ. աշխ., էջ 228։

20 Վ. Մ. Մարտիրոսյան,, նշվ. աշխ., էջ 126։

21 Նույն տեղում, էջ 129։